**Արձանագրություն N2-3**
**<<ՊՊԾ-ԲՄԱՇՁԲ-1/2021-12>> ծածկագրով գնման ընթացակարգի**
**գնահատող հանձնաժողովի նիստի**

<<21>> <<06>> 2021թ.

ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ- Առուստամյան Ա.

Հանձնաժողովի անդամներ՝

Մուրադյան Վ.

Ղուկասյան Ղ.

Սեդրակյան Ա.

Կուպալյան Ժ.

Հանձնաժողովի քարտուղար-Գասպարյան Կ.

1. __Գնման ընթացակարգի հայտ ներկայացրած մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին__

Ընդունել ի գիտություն՝

1.1. Գնման ընթացակարգի մանակիցներ «ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ՔՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ, «Արտդիանշին»ՍՊԸ, «Հայրենի Տուն» ՍՊԸ, «ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ, «Էդուարդ շին» ՍՊԸ և «Լեգենդ քնսթրաքշն ՍՊԸ»-ների փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 17.06.2021թ.-ին ծանուցվել է վերջիններիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ

աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում մասնակիցների կողմից շտկվել են անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը ներկայացվել է հանձնաժողովի քարտուղարին՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով: Քարտուղարը փաստաթղթերն ստանալու օրը հաստատել է դրանք ստանալու հանգամանքը: Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում մասնակիցների ոչ գնային պայմանները հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝

կողմ 5,

դեմ 0:

**<u>2. Բանակցությունների կազմակերպման և անցկացման մասին:</u>**

2.1 Հաշվի առնելով, որ <<**ՊՊԾ-ԲՄԱԾՁԲ-1/2021-12**>> ծածկագրով գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու համար գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը, ծանուցել ոչ գնային պայմանները բավարարող «ԿԱՊԻՏԱԼ ՇԻՆ ՔՈՆՍՏՐԱԿՇՆ» ՍՊԸ, «Արտդիանշին»ՍՊԸ, «Հայրենի Տուն» ՍՊԸ, «ՎԱՆՇԻՆ ԳՐՈՒՊ» ՓԲԸ, «Էդուարդ շին» ՍՊԸ և «Լեգենդ քնսթրաքշն ՍՊԸ»-ներին առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպվող բանակցությունների մասին, որը տեղի կունենա 24.06.2021թ. ժամը 10:00-ին Պետական պահպանության ծառայությունում, ք. Երևան Պռոշյան փողոց 1-ին փակուղի 20 հասցեում:

Ընդունվել է որոշում՝

կողմ 5,

դեմ 0

2.2 Բանակցությունների համար ներկա գտնվող մասնակիցներին գնային առաջարկների նվազեցման համար կտրամադրվի 10 (տաս) րոպե ժամանակ, որի ընթացքում կարող են լինել գնային առաջարկների նվազեցումներ և դրանք կարող են բարձրաձայնվել ինչպես մասնակցի, այնպես էլ, եթե փոխանցվել է հանձնաժողովի նախագահին՝ հանձնաժողովի նախագահի կողմից:
Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին նիստին ներկա յուրաքանչյուր մասնակցի կողմից նվազագույն գնային առաջարկը սահմանված ձևաչափով կփոխանցվի գնահատող հանձնաժողովի նախագահին, որը կհամարվի վերջնական: Վերջինիս կողմից դրանք կբարձրաձայնվեն, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կներկայացվեն աղյուսակի տեսքով: Բանակցությունների արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը կհայտարարվի ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝
կողմ 5,
դեմ 0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Առուստամյան Ա. |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Մուրադյան Վ. |
| | Ղուկասյան Ղ. |
| | Սեդրակյան Ա. |
| | Կուպալյան Ժ. |
| Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ | Գասպարյան Կ. |